ՍԻՐԱՆ ՁԱՔԱՐՅԱՆ

ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄ ՊԱՏՄԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՏՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Անձնավորումը լայն առումով փոխաստեղծություն հեքիաթներիս է որի միջոցով բնության անշունչ առարկաներին, կենդանիներին, բույսերին ժողովուրդը նաև ստեղծագործողը վերագրում է մարդկային հոգևոր նոր բաղադրամասեր հատկանիշներ, դրանց նպատակը նեղությունը նվազեցնելու տեսակետ մեղաբերումներն ու ձգտումները:

Անձնավորումը ստեղծագործական շատ հին հնար է, որ գալիս է ժողովրդական ճանաչողությունից: Այս հողությունը կապված է մարդկության մանկության շրջանի, մարդկանց հնագույն ստածողության հետ, ըստ որի բնության երևույթները շնչավորվում էին, ստանում մարդկային գծեր: Մարդիկ հավատում էին մարդու և բնության նպատակ մարդկային հատկանիշներին բնության երևույթներին տալով մարդկային բնութագրումներ: Երևինքը մոայվեց ծովը հառաչեց, քամին պարում է: արևը ժպտում է: ալիքները երգում են, ծառերը պարում են և այլն:

Անձնավորման գեղարվեստական գործումը խոսքում ունի տարբեր նպատակներ: Ամենից առաջ գրողը, անձնավորելով անշունչ առարկաները, կենդանիներին ու բույսերը, նրանց վերագրում է մարդկային հատկանիշներ և դրանով մարդուն վերաբերող իր մտքերը ասում: Նրանց միջոցով: Ճանաչողության այս ուղին ունի դաստիարակչական հզոր, այն էլ անգերազանց բնության ազդեցություն: Անձնավորման միջոցով ստեղծագործության հերոսները (ասացինք առաջին կամ ժողովուրդը, կամ գրողը) ոչ թե ուղղակիորեն են պատասխանում այս կամ այն մարդկային արատը, (որը կրողներ դպրոցականների վրա այն ազդեցությունը չի թողնում), այլ միջնորդավորված: Միաժամանակ այն ունի ճանաչողական նշանակություն, ընթերցողը, հատկապես մանուկ ընթերցողը անձնավորման հնարով գիտելիքներ է ձեռք բերում իրերի, բույսերի, կենդանիների, բնության մասին: Անձնավորված առարկաները դառնում են ոչ միայն մարդկանց գործելակերպը պատկերող գործոններ, այլև մասնակիցներ, ստեղծվում է համահնչունություն մարդու հոգեբանության և անձնավորվող բնության, առարկաների միջև:

Անձնավորման վրա է հիմնված ոչ միայն հայ, այլև հնդեվրոպական հսկայածավալ մանկական գրականությունը: Այդ ստեղծագործություններից մեծ քանակությամբ զետեղված են տարրական դասարանների մայրենիի դասագրքերում, մասնավորապես՝ «Մայրենի 1» դասագրքում, ինչպիսիք են՝

«Արի՛ ծանոթանանք», «Արջն ու գիրքը», «Ոետինը», «Գայլն ու աղվեսը», «Ի՜նչ լավ է, երբ մենակ չես», «Խորամանկ մուկը», «Պապն ու շաղգամը», «Իա-իան կորցրել է պոչը», «Կոշկավոր կատուն», «Հնարագետ նապաստակը», «Ճամփորդները», «Մատնաչափիկը», «Քամին, արևը և սառնամանիքը», «Կարմիր գլխարկը», «Աղը և բամբակը», «Առյուծը, գայլը և աղվեսը», «Ուղտն ու ծիտը», «Աղվեսը և թղթատար գայլը», «Ով աշխատի, նա կուտի», «Կակաչն ու մանուշակը», «Կամակոր այծերը», «Գետակը և ուռիները», «Գոռոզ նապաստակը», «Ագռավ եղբայրները», «Ուլիկը», «Սորթապաշտը», «Ինձ լա՛վ լսիր, ա՛յ տիկնիկ», «Գայլը և արագիլը», «Սեղանների տրտունջը», «Աքլորն ու մարգարիտը», «Շնծաղիկը», «Ծիտը», «Անձրևը», «Ծաղիկների ծայնը», «Փիսիկի գանգատը», «Զատիկը», «Մեղուն ու հավը» և այլ նյութեր, որոնցից յուրաքանչյուրը մի նպատակ է հետապնդում: Այս ստեղծագործություններից շատերը երեխաներին ծանոթ են մուլտիպլիկացիոն կինոնկարներից, սակայն դրանց ընթերցանությունն ու բնագրի շուրջ տարվող աշխատանքն է միայն նպաստում բովանդակության ենթաշերտերի տակ թաքնված գաղափարը ենթատեքստը բացահայտելուն, որն էլ հենց ունի դաստիարակչական զորավոր արժեք:

Անձնավորման գեղեցիկ օրինակ է Ս. Մուրադյանի «Մենավոր ծառը» պատմվածքը, որի մեջ հեղինակը անձնավորել է լորենուն նրա միջոցով ցույց տալով, որ մենակ մարդը չի կարող գոյատևել, չի կարող դիմադրել բնության արհավիրքներին և, ընդհանրապես, կյանքի դժվարություններին.

«Արևը սկզբում ջերմացրեց նրան, իսկ հետո խանձեց նրա կատարը:

Կարկուտը ծակծկեց նրա լայն տերևները:

Կայծակը կոտրատեց նրա ճյուղերը:

Հովիվը մի անձրևոտ օր լորենու փչակի մոտ կրակ արեց. ծառը մխաց, մխաց ու մի գիշերում չորացավ, ծերացավ:

Իսկ անտառի ծառերը, թիկունք թիկունքի տված, ամուր կանգնած են դեռ:

Ոչ կարկուտից են վախենում, ոչ կայծակն է նրանց հալածում» (36, էջ 31):

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերը հարուստ են փոխաբերություններով, սակայն, ցավոք, թե՛ դասագրքերում և թե՛ դրանց մեթոդական ուղեցույցներում հավուր պատշաճի տեղ չի տրված լեզվաարտահայտչամիջոցների ինչպես այդ, այնպես էլ մյուս տեսակների ուսուցմանը: Պատահական չէ, որ ուսուցիչներն էլ հիմնականում չեն կարևորում խոսքի հարստացման այդ հնարները:

Մեր դասալսումներն ու պրակտիկ մանկավարժական փորձը ցույց են տվել, որ հաճախ անձնավորման կիրառմամբ ստեղծագործություններն ընթերցելուց և նրա շուրջ դասարանային վերլուծական աշխատանք կատարելուց հետո անգամ երեխաներն ըստ ամենայնի չեն կարողանում ըմբռնել ստեղծա-

գործության գաղափարը, կռահել ենթատեքստը, և հեղինակի՝ այդ արտահայտչամիջոցի կիրառման նպատակը դառնում է անհրագործելի, ապարդյուն։ Այս խոչընդոտը մասնավորապես չի հաղթահարվում նաև այն պատճառով, որ ուսուցիչների մի մասը հաճախ չի կարողանում մեթոդապես ճիշտ իրականացնել նյութի ուսումնասիրման մեթոդիկան։ Արդյունքում կորչում է ստեղծագործության գաղափարը, որի ընդգծմանն էր միտված տվյալ արտահայտչամիջոցի կիրառումը։ Իսկ երբ աշխատանքը տարվում է մեթոդապես ճիշտ, փոխաբերությունները երեխաներին մատչելի են դառնում։ Այսպես, օրինակ վերը նշված «Մենավոր ծառը» ստեղծագործության գաղափարի վերհանմանը նպաստելու, հեղինակի օգտագործած արտահայտչամիջոցներն այդ նպատակին ծառայեցնելու համար նպատակահարմար է ստեղծագործության շուրջ տարվող աշխատանքն ամբողջացնել նրա բովանդակությունը լրացնող կամ բացահայտող հետևյալ առածներով՝ «Մի ձեռքը ծափ չի տա», «Միությունը ուժ է», «Մեջք մեջքի տանք, սարեր շուռ կտանք» և այլն։Արդյունքում, առանց մեծ դժվարության, աշակերտները կարողանում են գտնել նշված առածների և պատմվածքի մեջ անձնավորման ճանապարհով ներկայացված գաղափարների ընդհանրությունը։

«Կակաչն ու մանուշակը» գողտրիկ պատմվածքում անձնավորված ծաղիկները երեխաներին շատ սիրելի և հանրածանոթ են։ Այդ ծաղիկների գրույցի միջոցով երեխաները նախ ավելի լավ են ճանաչում շրջակա բնաշխարհը, ապա նաև՝ նրանց արժանիքները։

Աշակերտները բացատրում են, որ հեղինակը մանուշակի անվան տակ ներկայացրել է համեստ և արժանիքներով հարուստ մարդուն։

Որոշակի հարցերից հետո, երեխաներին դժվար չէ հանգել «Համեստությունը զարդարում է մարդուն» ասացվածքին։

Հովհաննես Շիրազի «Քամին ու մանուշակը» բանաստեղծության մեջ խոսքի բռնված քամու և մանուշակի երկխոսության միջոցով աշակերտները հայտնաբերում են այն գաղափարը, որ մայր հողից կտրվելը մահացու է բոլորի համար։

Անձնավորման օրինակ է Հովհ. Թումանյանի «Ծաղիկների երգը» բանաստեղծությունը, որը հատկապես արժևորվում է իր ճանաչողական նշանակությամբ։ Բանաստեղծության մեջ անձնավորված են <u>առևտ</u>. <u>ջուրը</u>. <u>ծառիսները</u>. որոնց միջոցով ներկայացվում է բնության զարթոնքը։ Այս բանաստեղծության մեջ օգտագործված անձնավորման հնարն էլ ավելի ընկալելի դարձնելու, հեղինակի մտքերն արտահայտիչ, տպավորիչ դարձնելու նպատակով պետք է ուշադրություն դարձնել բանաստեղծության մեջ օգտագործված ծաղկանուններին և աշխատել, որ երեխաները ոչ միայն մտապահեն, այլև ճանաչեն դրանք։ Այդ նպատակով, կարելի է դասարանի աշակերտների մի մասին կոչել ծաղկանուններով և հանձնարարել, որ յուրաքանչյուրը կարողա-

նա բանաստեղծության մեջ գտնել իր անունը կրող ծաղիկը, փորձել նաև համապատասխան ծաղիկները գտնել և բերել դասարան: Կարևոր է նաև ծաղիկներին վերագրող գույների, հատկությունների ճանաչումը: Աշակերտները բանաստեղծության մեջ պետք է կարողանան բացահայտել նաև արևի կենսատու նշանակությունը:

Որպեսզի երեխաները ոչ միայն գտնեն բանաստեղծի օգտագործած անձնավորման հնարները, այլև կարողանան դրանք օգտագործել իրենց խոսքում, նպատակահարմար է գրատախտակին փակցրել ուսումնական տարվա ընթացքում երեխաների սովորած ստեղծագործություններից այն բառերն ու արտահայտությունները, որոնք անձնավորում են պարունակում: Այս ձևով երեխաներից յուրաքանչյուրը ոչ միայն կարողանում է մտապահել, այլև մեկնաբանել և ինքնուրույն խոսքում օգտագործել անձնավորում պարունակող բառերն ու արտահայտությունները:

Ճանաչողական նշանակություն ունի նաև Հ.Թումանյանի անձնավորում պարունակող «Գետակը» բանաստեղծությունը, որի մեջ զրույցի են բռնված փոքրիկն ու գետակը:

Հեղինակը, անձնավորելով գետակը, թվարկում է այն գործերը, որ առանց ջրի չի ստացվի, և միաժամանակ հասկացնում է, որ գետերը իրենց ջրերը ստանում են աղբյուրներից, առվակներից և հոսելով գնում՝ թափվում են ծովը:

Տարրական դասարանի աշակերտների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում կենդանական աշխարհը, իսկ երբ կենդանիները մարդկային լեզվով խոսում են, էլ ավելի են հետաքրքիր դառնում, քանի որ հենց այդ կենդանիներն իրենց բնույթով օնունդ են տալիս երեխաների հարցասիրությանը: Այդ պատճառով կենդանական հեքիաթները, հատկապես այնպիսիք, որոնց մեջ նաև մարդն է գործում, երեխաների սիրելի գործերից են: Ընթերցում ենք Վ.Այգեկցու «Մարդը և առյուծը» առակը և նկատում, թե ինչ հետաքրքրությամբ են լսում երեխաները: Նրանց ուրախացնում են այն տողերը, որտեղ հեղինակը պատկերում է, թե ինչպես են վայրի գազանները փախչում մարդուց:

Անձնավորման լավագույն օրինակներ են երեխաների համար շատ սիրելի ստեղծագործությունները, ինչպիսիք են «Ոսկե ձկնիկը», «Չարի վերջը», «Շունն ու կատուն», «Ճպուռն ու մրջյունը», «Խոզն ու ագռավը» և այլն:

Մանկավարժների, հոգեբանների և մեթոդիստների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին մասնավորապես հետաքրքրում են նախ իրենց տարեկիցների հետ կապված պատմությունները, ապա կենդանիների մասին ստեղծագործությունները: Կենդանիների աշխարհը հետագայում ևս երկար ժամանակ շարունակում է մնալ մարդու հետաքրքրությունների շրջանակում: Եվ, երբ կենդանիներին անձնավորում են տվյալ տեսակին հարիր անձնային որակներով,

ստեղծվում է կենդանու մի նոր անձնավորված որակ և հաճախ մարդիկ իրենց շրջապատի մարդկանց էլ նմանեցնում են ընտանի կամ վայրի կենդանիներին (աղվեսի պես խորամանկ, նապաստակի նման վախկոտ, կրիայի պես դանդաղկոտ, առյուծի պես հզոր, արծվի պես երկարակյաց և այլն): Հիշենք, որ մարդկանց բնութագրելու համար և անձնավորման նպատակով մարդիկ օգտագործում են նաև բուսական աշխարհը (բարդու պես սլացիկ հասակ, վարդի պես քնքուշ, մանուշակի պես համեստ և այլն):

Պատահական չէ, որ մարդիկ նաև հասուն տարիքում մեծ հետաքրքրությամբ են ընթերցում այն առակները, հեքիաթները, որոնց մեջ անձնավորված են թե կենդանիները, թե բույսերը:

Անձնավորումն իբրև արտահայտչամիջոց իր կարևոր տեղն ունի խոսքում, և նրա ունեցած ազդեցությունն ըստ ամենայնի օգտագործվում է տարրական դպրոցում թե դասագրքերում նյութերի ընտրության իմաստով, թե դասագործընթացում: Այսպիսով, տարրական դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված են իսկապես կրտսեր դպրոցականների տարիքին, հետաքրքրություններին և մտավոր կարողություններին համապատասխան ստեղծագործություններ, իսկ դրանց կից տրված մեթոդական կառույցում հարցերի և առաջադրանքների միջոցով ընկալման փորձ է արված: Սակայն որպեսզի ուսուցիչները կարողանան դրանց իմաստը ճիշտ հաղորդել երեխաներին՝ զարգացնելով նրանց երևակայական միտքը, պետք է մշակել դասագրքերի մեթոդական ուղեցույցներ, դրանցում տալով հատուկ հանձնարարականներ և անձնավորում պարունակող ստեղծագործությունների ուղղությամբ տարվող հետևյալ քայլերը.

1. անձնավորում պարունակող բնագրի ընթերցում, անձնավորման որոշում.
2. գլխավոր մտքի՝ գաղափարի վերհանում, ենթատեքստի կռահում.
3. անձնավորման կիրառման նպատակի որոշում. ինչի՞ համար է համեմատվում, ինչո՞ւ հենց այդ համեմատությունն է ընտրվել.
4. ծանոթ բնագրերից անձնավորման դեպքերի վերհիշում, վերլուծություն.
5. անձնավորում պարունակող բառակապակցությունների, արտահայտությունների բառարանի կազմում.
6. բնագրի ամբողջացում տրված անձնավորումներով.
7. բնագրի ամբողջացում հարմար անձնավորումներով.
8. անձնավորումների օգտագործում խոսքում:

Օգտագործված գրականություն

1. Ավագյան Վ., Անտոնյան Ն. , Խաչատրյան Ռ. , «Մայրենի 3 »,Հանրակրթական դպրոցի դասագիրք, Երևան, «Լույս» 2002, 287 էջ:
2. Գյուլամիրյան Ջ., Թորոսյան Կ., «Մայրենի 2», Երևան, «Լույս», 2003, 300 էջ
3. Գյուլամիրյան Ջ., Մարտիրոսյան Լ., «Մայրենի 1», Երևան, «Լույս», 2003, 170 էջ: